ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հ Հ, Կոտայքի մարզ, Գառնի համայնք, Ս. Շահումյան 4,
Garnihamaynq@mail.ru, հեռ. +37441125156

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

25/09/2023թ. **գ.Գառնի**

2023 թվականի սեպտեմբերի 25-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայքի վարչական շենքում տեղի ունեցավ «ԱՆԴԵԶԻՏԲԱԶԱԼՏ» ՍՊ ընկերության ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի բազալտի հանքավայրի տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման վերաբերյալ հանրային 2-րդ քննարկումը:

Մուտքի խոսքով հանդես եկավ ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայքի ղեկավարի տեղակալ Կարեն Գաբրիելյանը, ապա և խոսքը տրամադրեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ մասնագետ Ա. Վարդանյանին:

Լսումների ընթացքում, որը տեսաձայանագրվել է, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ մասնագետ Ա. Վարդանյանի կողմից ներկայացվեց փորձաքննական փուլի գործընթացի վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ մասնագետ Ա. Վարդանյանի կողմից բարձրացվեց մի շարք հարցեր, որոնցից հիմնականը վերաբերվում էր նախնական գնահատման հայտում նշված պայթցման աշխատանքների, տարածքում առկա հեղեղատարի, համայնքային ճանապարհի, հայցվող տեղամասի հարևանությամբ գտնվող այգիների և այլնի վերաբերյալ:

Ինչին ի պատասխան ընկերության ներկայացուցիչ Գուրգեն Հակոբյանը հայտնեց, որ հիմնական փուլում (եթե գորընթացը ունենա շարունակական բնույթ) պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում և անհրաժեշտության դեպքում այդ մասը նախնական գնահատման հայտը կլրամշակվի:

ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայքի ղեկավարի տեղակալ Կարեն Գաբրիելյանը հայտնեց, որ որ համայքային ճանապարը չի օգտագործվում, իսկ հեղեղատարը երբեք նպատակին չի ծառայել:

Հայցվող տեղամասի հարևանությամբ գտնվող այգիների սեփականատերերը հայտնեցին, որ չեն առարկում այդ տարածքում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ իրականացնելուն:

Խոսվեց նաև հանքավայրի տարածքից մի քանի կմ հեռավորության վրա նախատեսվող ջարդիչ կայանի կառուցապատման վերաբերյալ:

Տեղի ունեցավ նաև մտքերի փոխանակություն ընկերության ընկերության ներկայացուցիչ Գուրգեն Հակոբյանի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿի ներկայացուցիչ՝ մասնագետ Ա. Վարդանյանի և լսումների ներկա բնակիչներին միջև:

Լսելով վերոգրյալը, մենք՝ ներքոստորագրյալներս կողմ ենք և տալիս ենք մեր համաձայնությունը ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայքի տարածքում գտնվող «ԱՆԴԵԶԻՏԲԱԶԱԼՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի բազալտի հանքավայրի տեղամասումում օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի վերաբերյալ աշխատանքներ իրականացնելու համար:

Լսումների կազմակերպիչ՝ **Լ. Թադևոսյան**

Գառնի համայքի ղեկավարի
առաջին տեղակալ՝ **Կ. Գաբրիելյան**

«ԱՆԴԵԶԻՏԲԱԶԱԼՏ» ՍՊ ընկերության
Ներկայացուցիչ՝ **Գ.Հակոբյան**

Արձանագրող՝ **Հ.Գրիգորյան**